ՍԱՀՄԱՆՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» --------- 2016թ. N_____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2016 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.451-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Մարգարյան փողոցի հ.45 շենքի հ.126՝ 101.5 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.21072015-01-0084 վկայական) անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով տրամադրել Լուսյա Սամվելյանին (Լուսիկ Ագուլեցի)՝ Մուրացանի փողոցի հ.79 հասցեում գտնվող տարածքը որպես թանգարան կազմակերպելու պայմանով:
2. Ընդունել ի գիտություն, որ Մուրացանի փողոցի հ.79 հասցեում գտնվող «Ագուլեցի» ազգագրական մշակութային ստեղծագործական կրթական հիմնադրամի գործունեությունը դադարելու կամ նշված հասցեի տարածքն այլ նշանակությամբ օգտագործելու դեպքում, սույն որոշման 1-ին կետում նշված բնակարանի համար կնքված անժամկետ, անհատույց օգտագործման պայմանագիրը համարվում է լուծված:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու սույն որոշման նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Մարգարյան փողոցի հ.45 շենքի հ.126՝101.5 քմ մակերեսով բնակարանն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել գեղանկարչուհի, ազգագրագետ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, «Մովսես Խորենացի» մեդալակիր՝ Լուսյա Սամվելյանին (Լուսիկ Ագուլեցի):

Լուսիկ Ագուլեցին ծնվել է 1946 թվականին Նախիջևանի Ագուլիս գյուղում, այնուհետև 1953 թվականին ընտանիքի հետ տեղափոխվել է Երևան: Սովորել է Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում: Բազմաթիվ մրցանակների դափնեկիր է: Նրա կտավները գտնվում են Հայաստանի և արտերկրի թանգարաններում, մասնավոր հավաքածուներում:

Նա իր ողջ գիտակցական կյանքում հավաքագրել է հայոց տոնածիսական մշակույթը: Լուսիկ Ագուլեցին իր սեփական տունը վերածել է թանգարանի և այնտեղ ցուցադրում է այն ամենը ինչ կապված է հայ ինքնության և մշակույթի հետ՝ հին հայկական արդուզարդ, գորգեր, կարպետներ, կահ-կարասի: Ագուլեցին իր սեփական միջոցներով ձեռք է բերում թանգարանային ցուցադրման համար հայկական հնաոճ իրեր, նվագարաններ և այլ պարագաներ: Լուսիկ Ագուլեցու շնորհիվ հին հայկական շատ տարազներ են վերականգնվել ու նորից կյանքի կոչվել: Նա ներկայացնում է հայկական ավանդույթները ու սովորույթները, որոնց պահպանումը ունի բացառիկ նշանակություն:

Վերջինս՝ իր բազմանդամ ընտանիքով բնակվում է սեփականության իրավունքով իրենց պատկանող Մուրացանի փողոցի հ.79 հասցեում գտնվող տուն-թանգարանում, որը հնարավորություն չի տալիս առօրյա կենցաղավարությունը համատեղել թանգարանային գործունեության հետ և թանգարանն օգտագործել իր նպատակային նշանակությամբ:

Հաշվի առնելով նշվածը, առաջարկվում է Ագուլեցու ընտանիքի կողմից իրենց սեփականության իրավունքով պատկանող գույքը որպես թանգարան օգտագործելու ժամանակահատվածում բնակվելու համար վերջինիս անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Մարգարյան փողոցի հ.45 շենքի հ.126 երեք սենյականոց բնակարանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անժամկետ, անհատույց օգտագործման տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անժամկետ, անհատույց օգտագործման տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ